ՀՀ, ք. Երևան-0019, Բաղրամյան փ. 1/27
Էլ. փոստ՝ antifakeam@gmail.com
Հեռ.՝ (+374 91) 57-27-18

№ 015-21

«07» հունվարի 2021 թ.

Վայոց ձորի մարզպետ՝ Արարատ Գրիգորյանին
(Հասցե՝ ք. Եղեգնաձոր, Շահումյան 5,
էլ. փոստ՝ vdzor@mta.gov.am,
Հեռ.՝ (0281) 2-25-22)

«Անտիֆեյք.ամ» կայքի գլխավոր խմբագիր
Աստղիկ Մաթևոսյանից

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի՛ պարոն Գրիգորյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 51-րդ և 42-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ տեղեկություն տրամադրել այն մասին, թե որքան է կազմել 2020 թվականին Վայոց ձորի մարզպետարանի աշխատակիցներին հատկացված պարգևավճարների ընդհանուր չափը և պարգևավճարների չափը՝ ըստ ամիսների: Որքա՞ն է կազմել նույն ժամանակահատվածում մարզպետի պարգևավճարի ընդհանուր չափը: Տարընթերցումներից խուսափելու համար խնդրում եմ պարգևավճարի չափը տրամադրել հարկերը ներառյալ և հետևյալ ձևաչափով՝ գումարի չափը թվերով և փակագծում՝ տառերով:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու սույն

Հ. Հ. ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
Մուտքի թիվ 0229
18.01.2021 թ.

հարցումը ստանալուն պես իրազեկել այդ մասին, ինչպես նաև հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

(Պատրաստ եմ վճարել տեղեկատվության պատճենահանման ծախսերը):

Խնդրում եմ հարցման պատասխանն ուղարկել և՛ նշված էլեկտրոնային փոստի հասցեով, և՛ թղթային տարբերակով՝ նշված հասցեով:

Կանխավ շնորհակալ եմ՝

«Անտիֆեյք.ամ» կայքի գլխավոր խմբագիր՝ **Ա. Մաթևոսյան**

«07» հունվարի 2021 թ.